



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese of the ARMENIAN Church of AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30404
Մարտ 24, 1988

Արժանաշնորհ
Տ. Աւետ Բնկ. Թերզեան
Հովիւ Ա. Փրկիչ Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ուստր.

Սիրելի Տէր Աւետ.

Ստացած ենք Մարտ 15, 1988 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր Ասիսակազմութեամբ Փետրուար 7ին գումարուած համայնքիդ Ծխական Ժողովին մէջ կատարուած է Ծխական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի Աորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հանձնէք փութով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի Աորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Ծխական Խորհուրդի Աոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնատու գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ա. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Կէրի Յովհաննէսեան
Մարտիրոս Մուշակեան
Օր. Մէրլըն Մարգարեան
Էտուրրո Ադամեան
Կէրի Տէկրեմէճեան
Օր. Կլատրա Նորտիկեան